Հավելված
ՀՀ կառավարության 2021 թվականի
օգոստոսի 6-ի N 1263 - Ն որոշման

«Հավելված N 2
ՀՀ կառավարության 2015 թվականի
հոկտեմբերի 15-ի N 1200 - Ն որոշման

# Ձ Ե Վ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՋՈՀԵՐԻ ՆՈՒՅՆԱՑՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԽՈՐՀՈՒՐԴ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետությունում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի նույնացման հանձնաժողովի կողմից Հայաստանի Հանրապետությունում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի հարցերով խորհուրդ ներկայացվող հաշվետվությունն ունի երկու բաժին՝ նկարագրական և ծախսային, որոնցում պետք է ներառվի հետևյալ տեղեկատվությունը.

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1) նույնացման հանձնաժողովի գումարած նիստերը և քննարկվող հարցերը՝ ըստ «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ մասի և 23-րդ հոդվածի 1-ին մասի.

2) հաշվետու ժամանակահատվածում նույնացված զոհերի՝

ա. թիվը,

բ. սեռը,

գ. տարիքը,

դ. քաղաքացիությունը,

ե. բնակության վայրը,

զ. թրաֆիքինգի/շահագործման տեսակը,

է. հայտնաբերող կառույցը.

3) աջակցություն ստանալու նպատակով ուղղորդված հավանական զոհերի, զոհերի/հատուկ կատեգորիայի զոհերի թիվը, օրենսդրությամբ սահմանված կարգով նրանց տրամադրված աջակցության տեսակները (պետական և ոչ պետական).

4) հավանական զոհին/զոհերին հայտնաբերող կառույցը/կառույցները (կազմակերպությունը/կազմակերպությունները).

5) պաշտպանության համար ներկայացված միջնորդությունների և միջնորդության հիման վրա կայացրած որոշումների ամփոփ բովանդակությունը:

2. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԸ

| NN ը/կ | Ոլորտը | Ծրագրի անվանումը | Պատասխանատու գերատեսչությունը | Ծրագրի իրականացման համար նախատեսված գումարը | Ծրագրի իրականացման համար ծախսված գումարը | Իրականացված աշխատանքների հակիրճ նկարագիր |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Սոցիալական աջակցություն | | ՀՀ ԱՍՀՆ | | | |
| 2. | Կրթություն | | ՀՀ ԿԳՄՄՆ (կատարող)<br>ՀՀ ԱՍՀՆ<br>(համակատարող) | | | |
| 3. | Առողջապահություն | | ՀՀ ԱՆ<br>(կատարող)<br>ՀՀ ԱՍՀՆ<br>(համակատարող) | | | |
| 4. | Պաշտպանություն | | Ոստիկանություն<br>(կատարող)<br>ՀՀ ԱԳՆ<br>(կատարող)<br>ՀՀ ԱՍՀՆ<br>(համակատարող) | | | |
| 5. | Օրենքով նախատեսված այլ ոլորտներ | | Շահագրգիռ պետական գերատեսչություններ | | | |
| | | | | Ընդամենը՝<br>... հազ. դրամ | Ընդամենը՝<br>... հազ. դրամ | |

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

06.08.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ